

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԽԶ. ՏԱՐԻ — 1932

Կը խմբագրուի եւ կը հրատարակուի

Մեքիտարիստ Թեոֆանիոսեան Կոլոմբէ Ի Վիեննա
աշխատակցութեամբ ազգային եւ օտար Բանասէրներու:

Որպէս զի աւելի մատչելի դառնայ Ուսումնասիրութեան
օտարալեզու արեւելագէտներուն, Խմբագրութիւնս
շարունակաբար պիտի ներկայացնէ նաեւ կարեւոր
բանասիրական յօդուածներուն համառոտ մէկ ամփո-
փումը, մեղազգային որ եւ է լեզուաւ:

Բաժանորդագիրն է առէն նորիցի
համար՝ 5 տորար, կամ թիկ:

Մեր հասցէն՝

REDACTION DE LA REVUE "HANDES AMSORYA,"
VIENNE (Autriche), VII, Mechitharistengasse 4.

Հ Ա Յ Ս Տ Ե Ս Ա Ն

R. Vasmer

Kustos an der Eremitage, Leningrad.

Chronologie der arabischen Statthalter
von Armenien unter den Abbasiden, von
as-Saffach bis zur Krönung Aschots I.,
750—887.

Wien 1932.

Mechitharisten-Buchdruckerei.

S. VII+118, RM. 3.—.

Ք Ր Ե Ս Է Ր Բ Տ Ե Ղ Ե Կ Ե Տ Ո Ր

Ե. ՏԱՐԻ

1930

ՅՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

ՎԻԵՆՆԱ 1931

40, էջ 31. Գին՝ զուեց. Քր. 1.—.

"HANDES AMSORYA,"

MONATSSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOLOGIE

XLVI. JAHRGANG — 1932

Herausgegeben und redigiert von der

MECHITHARISTEN-KONGREGATION IN WIEN

unter Mitwirkung zahlreicher Armenisten.

Um unseren nichtarmenischen P. T. Abonnenten
die Benützung unserer Zeitschrift zu erleichtern,
werden wir fortlaufend von den wichtigen philo-
logischen Abhandlungen ein kurzes Resumé in einer
europäischen Sprache geben.

Preis dieses Jahrganges 5 Dollars.

Unsere Adresse:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 7—9

ՅՈՒԼԻՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԽԶ. ՏԱՐԻ 1932

ԵՂԻՇԻ ՎԱՐԳԱՊԵՏ

ԵՒ ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ԿՆՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ԲՆՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻՒՆ

(Շարունակութիւն):

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՁԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՄԱՐԶՊԱՆՈՒ-
ԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ (428—572)

Եղիշի Պատմութեան ուսումնասիրու-
թիւնը հարկ կը դնէ մեր վրայ շօշափել հոս
քանի մը մանր խնդիրներ, որոնք կը հային
մարդպանութեան շրջանի հայ պետական
կազմին:

2. դարը, զոր ունի Եղիշ իւր զննու-
թեան առարկայ, այն շրջանն է, երբ կը սկսին
կամաց կամաց լուծուիլ, քայքայուիլ Հայաս-
տանի ներքին վարչական կարգերը, որոնք
Արշակունի տան անկումէն ետքն ալ մնա-
ցած էին զեռ ի գորութեան: Պարսկական
քաղաքականութիւնը, որ հայ թագաւորու-
թեան բարձումը արագացուցած էր, կ'աշ-
խատէր այժմ բառնալ նաեւ այն առանձնա-
շնորհումները, զորոնք ի սկզբանէ կը վայել-
էր Հայաստան: Իր նպատակն էր Հայաստան
մարզը հաւասարցնել պարսկական պետու-
թեան անբաժին միւս մարզերուն:

Զինուորական կազմը, երկրին ներքին
վարչութիւնը եւ դատաստանը հայ նախա-
րարներու ձեռքն էր դեռ. թէպէտ երկրին
զերազոյն տէրը արքայից արքայն էր, բայց
կը զգար ժողովուրդը ինքիւնքը անկախ,
որովհետեւ ինքն էր երկրին զինուորական
ոյժը, կատաճորդուէր, կը դատուէր իւր
բնիկ տէրերէն, կը հովուէր իւր սեպհական
կաթողիկոսէն:

Ազատութեան այս վերջին նշմարները
երկար չտեսցին: Սկսաւ պարսիկը սեղմել
օղակը եւ անձկացնել ծիրը: Ստեղծուած
զրուիւնը ի սկզբան զժգոհութեան առիթ

տուաւ. շարունակութիւնը անհանդուրժելի
երեւցաւ: Ազատութեան ընտել, կրօնքին նա-
խանձախնդիր ժողովուրդը փորձեց այլ եւ
այլ անդամներ թօթափել հեթանոս թագա-
ւորին լուծը եւ սահմանակից քրիստոնեայ
պետութեան հովանին խնդրել: Զյաջողեցաւ
իւր յոյսերու մէջ. բայց նաեւ չյուսալքուե-
ցաւ, թէպէտ տուժեց իւր քաղաքական ազա-
տութենէն շատ բան:

Թէ ի՞նչպէս, ի՞նչ աստիճանով եւ ե՞րբ
կապտուեցաւ հայը իւր ազատութեան թեւե-
րէն, չզտայ տեղ մը բացատրուած ըստ ար-
ժանոյն: Հարկ եղաւ ինձ ի ձուռյ կատարել
իմ խուզարկութիւններս:

Որովհետեւ Արշակունի տունը իւր պե-
տական կազմը չափած եւ ձեւած էր պար-
թեական կաղապարին վրայ, իսկ պարթեա-
կանը ամբողջապէս իւրացուած էր Սաս-
նեաներէէ, վերջինս պէտք է աչքի առաջ ու-
նենալ երբ տկարանան հայկական ազգիւր-
ները: Համեմատութեամբ պարթեականին
աւելի ճոխ են տեղեկութիւնները Սասանեան
պետութեան վարչական կազմի մասին. ա-
սորի, բիւզանդացի եւ արաբ հեղինակներուն
կը պարտինք զանոնք: Արաբները թէեւ ուշ
են ժամանակով, բայց սասանեանց ժառանգ-
ներն ըլլալով, շատ բան հաղորդած են, մաս
մը անփոփոխ գտնելով երկրին մէջ եւ մաս
մ'ալ լսելով աւանդութենէն:

Ալ Մատուզի իւր Մուրուս ալ-դահար
աշխատութեան մէջ այսպէս կը ներկայացնէ
սասանեան պետութեան հինգ բարձր բար-
ձերը¹.

1. Maubadān maubad, մովպետան մով-
պետ, այն է եկեղեցականութեան ներկայա-
ցուցչութիւնը իւր կրկին դասերով. ա. Մով-
պետներ, բ. Հերպետներ:

¹ Hoffmann, Auszüge 293, Nöldeke, Tabari,

444:



2. Buzurg-framadār, վզուրկ-հրամար, որ է մեծ հազարապետը (premier ministre) :

3. Isbahbad, ասպահապետ, որ է սպարապետը, այն է պատերազմական նախարարը :

4. Dafirbad, դպրապետ, որ է երեւմտից նախարարը :

5. Bihluhšbad, աշխատանքի նախարար, կոչուած նաեւ Vāstrjošbad, շինականներու նախարար :

Այս վարչական կազմին համապատասխան էր Արշակունեաց օրով՝

- 1. Հայրապետը .
- 2. Հազարապետը .
- 3. Սպարապետը .
- 4. Մարտապետը (°) .
- 5. Մարզպետը (°) :

Իսկ Մարզպանութեան շրջանին՝

- 1. Կաթողիկոսը .
- 2. Մարզպանը .
- 3. Սպարապետը .
- 4. Մարտապետը (°) .
- 5. Հազարապետը :

Մենք պիտի խօսինք 2—5 բարձրու վրայ :

31. ՄԱՐԶՊԱՆԻ ՀԱՅՈՑ

Հայաստանի բաժանումը Պարսկական եւ Հռոմէական պետութիւններու միջեւ գէնքի ուժով տեղի չէր ունեցած . կատարուած էր երկու հօր պետութիւններու իրարու մէջ համաձայնութեամբ (395) : Թէպէտ ենթարկուեցաւ Հայաստան պարսկական եւ Հռոմէական գերիշխանութեան, բայց չկազմալուծուեցաւ, չկորսնցուց իւր ներքին անկախութիւնը . ունէր երկու բաժիններու մէջ ալ իւր թագաւորները :

Արշակի մահուամբ Հռոմէական բաժնին մէջ վերջ առաւ թագաւորութիւնը, վասն «կէս ազգին Հայոց» նշանակեցին Հռոմէացիք կրմսեր, որոնք Անտիոքի սպարապետին ենթարկուած կը խնամարկէին երկիրը հին հայկական իրաւունքով¹ : Պարսկական բաժնին մէջ, որ աւելի ընդարձակ էր, շարունակուեցաւ թագաւորութիւնը մինչեւ 428 : Արտաշէսի գահազրկութեամբ հոս ալ գազրեցաւ արշակունեան հարստութիւնը :

¹ Կ. Գիւտերբրի, Հռոմէական Հայաստան եւ Հռոմէական սարքաւորութիւնները Գ.—Ձ. դարերուն. թարգմ. Հ. Մ. Նորշումեան, Վիեննա 1914 :

Հայ նախարարները, որոնք Վրամ Ե. էն կը խնդրէին Արտաշէսի գահընկէցութիւնը, ի մէջ այլոց կ'ըսէին. «Բնաւ զի² իսկ եւս պիտոյ է թագաւոր . այլ իշխան պարսիկ ըստ ժամանակի եկեալ վերակացու լիցի մեզ, որ եւ զիւրաքանչիւր ուրուք ի մէջ ծանուցեալ զհպտակութիւն եւ զանհպտակութիւն՝ ցուցցէ ձեզ»² : Այս էր արդէն Պարսից փափաքը, որոնք 421ին Հռոմէացեաց հետ կնքած յաւիտենական խաղաղութենէն ետքը կը զգային իրենք զիրենք ազատ տրամադրելու Հայաստանի վրայ ըստ հաճոյս : Հայ նախարարներու առաջարկը կ'ընդունուի. «Եւ յայնմ հետէ առաքեցաւ նախ ի Վրամայ արքայէն Պարսից յաշխարհս Հայոց մարզպան պարսիկ . եւ յայնմ հետէ եղեն ի սպառ ի սպուռ անկեալք ընդ լծով ծառայութեան սնորէն ազգին Պարսից» : Այսպէս կը գրէր Ղ. Փարպեցի (25) Ձ. դարու սկիզբը, լրած յաւանդութենէ ծերոց :

Կծծի է պատմիչը հազորդելու մեզ թէ ի՞նչ պայմաններով եկաւ պարսիկ մարզպանը Հայաստան . նոյն իսկ թէ ի՞նչ էր անոր անունը :

Ասկէ յառաջ 377ին երբ Վարազդատի գահընկէցութենէն ետքը Չարմանդուխտ թագուհի եւ Մանուէլ Մամիկոնեան ճանչցած էին Շապուհ գերիշխանութիւնը, արքայից արքայն նոյնպէս ուղարկած էր Հայաստան պարսիկ մարզպան մը, որուն համար կը գրէր պատմադիրը թէ Շապուհ «զՍուրէն պարսիկ մի ճոխ ի նախարարացն իւրոց եւ ընդ նմա յղեաց տասն հազար հեծեալս» . այնուհետեւ «տային զաշխարհն Հայոց ի ձեռին Սուրենայ եւ հնազանդէին հրամանաց թագաւորին Պարսից . եւ կարգէին թագաւորին Պարսից յաշխարհէն Հայոց հարկս՝ տալ ընծայս եւ պատարագս : Սոյնպէս եւ մարզպանին Սուրենայ հասս եւ ոտծիկս (տպ. կօշիկս) եւ զպիտոյս զոտծկացն . սոյնպէս եւ տասն հազարացն զարման եւ կերակուր ըստ պիտոյիցն»³ :

Մարզպան, պճլ. marzəpān, պարսկ. marzbān, նախնարար փոխ առնուած է⁴ «սահմանապահ» իմաստով . Փ. Բիւզանդ Գ. 20 կը յիշէ Վարազ-Շապուհ մարզպանը, որ

² Ղ. Փարպ., 24 :
³ Փ. Բիւզանդ, Ե. 38 :
⁴ Hübschmann, Armenische Grammatik, էջ 193 :
⁵ Աճառեան, Հայերէն արձատական բառարան, Գ., էջ 913—914 :

էր «սահմանապահ արքային Պարսից յԱտրըպատական աշխարհին» :

Սասանեան շրջանի մարզպաններու մասին այսպէս կը գրէ A. Christensen⁵ :

Par «marzbān» on comprenait toujours particulièrement les commandants militaires des marches, les «margraves», et en temps de guerre, les marzbāns fonctionnaient souvent comme des généraux sous la direction des spāhbedhs, de sorte qu'ils semblaient avoir à peu près perdu leur qualité de gouverneurs. Mais on connaît aussi des marzbāns de beaucoup de provinces de l'intérieur... Le roi a envoyé un marzbān à telle ou telle province où il y en avait besoin, il a accumulé ou divisé les provinces selon l'opportunité, et les marzbāns ont eu toujours, probablement, un caractère plus militaire que civil, l'administration civile étant en grande partie, sous la centralisation plus accentuée de la période sassanide, aux mains de fonctionnaires inférieurs pour de petits territoires (des *šahrīghs*, des *déhīghs*), qui relevaient vraisemblablement du gouvernement central directement ou par l'intermédiaire des pādghōspāns, s'il y en avait.

Պարսիկ մարզպանը, որ կու գար Հայաստան, կ'ունենար իր հետ իւր ընտանիքը ծառաներով եւ սպասեակներով : Գեղեցիկ կը նկարագրէր մարզպանի նիստ ու կացը Անգեղան, երբ խորհուրդ կու տար Վաղարշին որ Հայոցմէ ընտրուէր Մարզպանը եւ ոչ Պարսիկներէ . կ'ըսէր (Փարպ. 177—178) .

«Օտար մարզպան որ երթայ յաշխարհն Հայոց, աշխարհն մեծ է, յամս երկուս եւ երիս հազիւ կարէ ճանաչել նախ զիրան աշխարհին, զգիւրն եւ զգիւտարն, ապա զմարդիկ աշխարհին, զլաւն եւ զվատթարն, զապիրատան եւ զպիտանին, եւ վարելով ըստ անգիտութեան խառն ի խուռն՝ ողոց շատ ծանր լինի : ... Մարզպանն պարսիկ որ երթայ յաշխարհն՝ կնաւ երթայ եւ որդուլք, դրամք եւ սիրելիք, ծառայիւք եւ աղախնեօք, եւ այնք ամենեքեան թէ զԱրեւայ տեսան զոտծիկ ուտեն՝ չէ սակաւ ծախան, եւ թէ զաշխարհն ուտեն՝ շատ վտանգ հասնէ մարդկան» : Անգեղանի նկատողութեան ուղղութիւնը արդարացուցին 548—553 տա-

⁵ A. Christensen, L'empire des Sassanides, le peuple, l'état, la cour. Kobenhavn 1907, p. 42—43 :

րիներու դէպքերը, երբ «գրագում բունութիւնս եւ գտառապանս, զոր հասուցանէին աշխարհին Հայոց գործակալքն», լսեց նոյն ինքն արքայից արքայն :

Ինչպէս Չարմանդուխտ թագուհուն օրով Սուրէն մարզպան եկած էր 10·000 զօրքով, նոյնպէս յաջորդ դարուն ունէին մարզպանները իրենց շուրջը որոշ թուով պարսիկ զօրք . Ատրվնասպի համար կը գրէր Փարպեցի (48) թէ «բանակէր» Շիրակի մէջ : Եւ երբ Պերոզի հրամանաւ Շապուհ Հայոց մարզպան կը նշանակուէր, Հազարաւորստ կը թողուր զինքը «այրուծիով, այրենալի դնալ» (Փարպ. 146) : Այսպէս նաեւ 571ին Սուրէն մարզպան, ինչպէս Յովհ. Եփեսացոյ տողերէն կ'իմացուի, ունէր իր շուրջը պարսիկ զուռ մը⁶ :

Ինչպէս առ հասարակ Պարսկաստանի դաւաճներուն, նոյնպէս Հայաստանի մարզպանները կ'ընտրուէին ազնուական տոհմերէ⁷, այսպէս «Շապուհ ի Միհրան տոհմէ», Սուրէն «ազգական» Խոսրով Ա.ի, Նիխորական, Նախապետ եւն :

Անոնց գործակալութիւնը կը տեւէր սովորաբար երեք տարի . Ս. Յիւզիւրուզիտի վկայարանութեան մէջ կ'ըսուի. «Եւ ի ընու այլ եւս երից ամացն յաջորդէ զՆախապետն որում Բնարիկն ասէին»⁸ : Նոյն ասութեան կը հանդիպինք նաեւ Եւստաթիոս Մծխեկը հանդիպինք նաեւ Եւստաթիոս Մծխեկը թագուց վկայարանութեան մէջ⁹, որուն համաձայն Խոսրովի տասներորդ տարւոյն (540/41) Վրաց մարզպանին՝ Արվանդ Գուսնասպի (Վնասպի) կը յաջորդէ «յետ երից ամաց» Վրժան Բուզմիլ :

Մարզպանին գործն էր հսկել երկրին «հաւատարմութեան» վրայ . դանձել երկրին հարկերն եւ ուղարկել Բարձրագոյն Գուռը : Այս տեսակէտով ուղադրութեան արժանի են

⁶ Գրիգոր Մանածիւր Ռափիկի վկայարանութեան մէջ կ'ըսուի թէ «Ասիկա շատ ազնուականներէ զեւրագասուած էր եւ արքայէն (Կաւասէն) նշանակուած էր գործակալ (մարզպան) հիւսիսի սահմանին եւ մարզին, եւ արքայէն հրամայուած էր Վրաց (Gurzan) եւ Արտանից (Artān) աշխարհին մէջ պահպանութիւն ընել եւ շատ հազար սրուծի կը գտնուէր իր հրամանին տակ» (երբ 521/525ին) . Hoffmann, Auszüge, 78—79 :

⁷ Հմմտ. A. Christensen, էջ 43 :
⁸ Վարք եւ վկայարանութիւն սրբոց. Բ. 127 :
⁹ Das Martyrium des hl. Eustafius von Mzchetha. Aus dem Georgischen übersetzt von Dschawachoff, bearbeitet von Harnack. Sitzungsberichte der Königlich preussischen Akademie der Wissenschaften zu Berlin, 1901, էջ 876 եւ 881 : Հմմտ. Acta Sanctorum Nov. IV. 196, ծ. 10 :

Վասակի հետեւեալ խօսքերը Վարդան Մամիկոնեանին ուղղուած .

«Ապա թէ Կայսր այլազգացոյնս ինչ խորհի եւ չճանաչէ զիւր օգուտսն՝ եւ ես մինչ Վրաց մարզպանն էի եւ դուռն Աղուանից յիմում ձեռին էր՝ բազում զօրագլուխք Հոնաց ընդ իս բարեկամացան ուխտիւ եւ երզմամբ, եւ այսօր նոյնին երզմամբ երթեակեն առ իս . եւ հարկիք ամենայն աշխարհիս Հայոց առ իս եմ, եւ գործախալք ամենայն յիմում ձեռին եմ, եւ այլ եւս բազում կարասի, գոր ի պարսիկ գործախալցն հանի՝ որ աստ ի Հայս էին, եւ յիմում գանձիկայ . յորմէ թէ զմի մասն Հոնաց տամ տանել՝ անտի ա՛յնչափ սաստիկ հանեմ Հոնս, որչափ զի հօղն Պարսից չբաւիցէ նոցա յաւարի¹⁰» :

Մարզպանի ոտձիկը պիտի հոգար երկիրը, այնպէս ինչպէս Բիւզանդ կը նկարագրէր . «կարգէին... յաշխարհէն Հայոց... մարզպանին Սուրենայ հասս եւ ոտձիկս եւ զպիտոյս զոտձիկացն» . նոյնպէս նաեւ բանակին : Այս իմաստով կը կարգանք նաեւ Զաքարիա հռետորին ընծայուած ժամանակագրութեան մէջ¹¹, նկատմամբ Աղձնիքի բզեշիին, որ տեղական մարզպան էր . «Պարսկաստանին վերաբերող Աղձնեաց աշխարհին զիւղերը՝ բաց ի ոչ գոյզն գլխահարկէ, որ բնակիչներէն արքունի գանձին մէջ կը հաւաքուէր, պարտական էին վճարել նաեւ հասը (ծէ՛ս, ոտձիկը) Բզեշիին որ իրրեւ արքային հիւպարքօսը կը նկատուէր» : Անշուշտ ծանրութիւն էր այս հայ բնակչութեան . որոնք զժուարտս պիտի կարենային զոհացնել երեք տարին անգամ մը փոփոխուող մարզպաններու ընչաքաղցութիւնը . եւ այս պատճառաւ «չատ վտանգ պիտի հասնէր մարզկան», ինչպէս կը խոստովանէր Անդեկեան : 553ին մարզպաններու հարստահարութիւններուն զէմ ժողովրդեան բողոքը հասած էր մինչեւ արքայից արքայի ականջը :

Անշուշտ նաեւ նոր մարզպանը նոյն պայմաններով եկաւ Հայաստան : Այս փոփոխութիւնը, որ կատարուած էր 428ին, զարմանալի է որ անյիշատակ թողուած է Կո-

րիւնէն : Մովսէս Սորենացի այս առաջին մարզպանը կ'անուանէ ՎԵՀՄԻ ՀՐՇԱՊՈՒ Հ¹² :

Պարսիկ մարզպանիս յաջորդներէն է ՎԱՍԱԿ ՍԻՒՆԻ : Շահապիվանի ժողովը (445) տեղի կ'ունենար «ի Վասակայ Սիւնեաց մարզպանութեանս Հայոց¹³» : Կը յիշէ նաեւ Ղ. Փարպեցի (էջ 47) թէ Բարձրագոյն Գուռը հրաւիրուած (449) նախարարներու թուին մէջ էր «ի տոհմէն Սիւնեաց Վասակ Սիւնեաց տէրն, որ եւ ի ժամուն մարզպանն էր Հայոց» : Ասկէ յառաջ Վասակ «Վրաց մարզպան» էր . ինքնին կ'ըսէ թէ «ես մինչ Վրաց մարզպանն էի եւ դուռն Աղուանից յիմում ձեռինն էր» (Փարպ. 83) . ուստի հաւանօրէն 442—445 տարիներու մէջ : Կորիւն երբ կը գրէր Մաշտոցի վարքը, տակաւին անձանօթ էր Վասակի այս տիտղոսին . անշուշտ՝ առանց յիշատակութեան պիտի չթողուր, եթէ նոյն պահուն Վասակ զգեցած ըլլար այս պաշտօնը . Կորիւնի խօսքերն են Վասակի մասին . «Յորում ժամանակի (երբ Մաշտոց Սիւնեաց աշխարհին մէջ կը գտնուէր) պարգեւեալ յԱստուծոյ հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց՝ քաջն Սիւսականն Վասակ, այր խորհրդական եւ հանձարեղ եւ յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ» (էջ 24) :

Մարզպանութեան տիտղոսին հետ պահած էր Վասակ Սիւնեաց տանուտէրութիւնը :

Առանց պատճառի չէր անշուշտ, որ արքայից արքայն հռետոր Սիւնիքի տանուտիրոջ կը յանձնէր միջնաշխարհին մարզպանութիւնը . Սիւնիքը սահմանամերձ Ատրըպատականի՝ աւելի պարսկամէտ էր քան միջնաշխարհը, որ Մամիկոնեաններու ազդեցութեան տակ կը հակէր զէպի Հոովմայիցիները : Այս պատճառաւ ալ թէպէտ հա՛յ մարզպան տրուեցաւ աշխարհին, բայց աւելուանական էր այն միայն . ընդհանուր զօհունակութիւն չչահեցաւ : Ծժգոհութիւնը կը զգացուի Շահապիվանի ժողովոյն նախարանէն ուր կը գրուի, թէ Սահակայ եւ Մաշտոցի, մեծ վարդապետներու վախճանելէն

¹² «Եւ մեծապարկեւ զնախարարն արձակեաց (Վոսա՛մ եւ) պարսիկ մարզպանաւ հանդերձ որում անուն էր Վեհմիհրէապուհ», Սոր. Գ. 64 : O. Braun, Das Buch der Synhados, էջ 14, ծան. 2, այս վեհմիհրէապուհի հետ նոյնացնել կ'ուզէ «Միհրէապուհ ի տանէ Արդապետայ», որ կը յիշուի 410ին Մարիասակի ժողովին մէջ : Սորենացոյ ազդեւր անձանօթ է : ¹³ Զ. Յ. Տաշեան՝ Յուլիան, էջ 653 :

¹⁰ Ղ. Փարպեցի, էջ 83. հմմտ. եւ 85 : ¹¹ Die sogenannte Kirchengeschichte des Zacharias Rhetor, էջ 173 :

եաքը «լինէր եղծունն եւ քայքայունն կարգաց եւ աւրինաց սրբոյ Եկեղեցւոյ... Բաղմանային որք յախաճէին ի գործս պղծութեան յետընդէմ զնայից... եւ մանաւանդ զի... չէր իշխանութիւն եւ տէրութիւն ի ձեռ(ի)ն սղգին Մամիկոնէից, զի զօղեալ եւ նուաճեալ եւ հնազանդեալ էին համբարձելոյ պարսկային թագաւորութեանն . զի թէպէտ եւ հեծէին մոմօային, մոնչէին ի նմանութիւն կորեանց առիւծուց Վարդան Մամիկոնեան համազգ(ե)աւք իւրեանց հանդերձ եղբարրք, այլ կային իրրեւ ի գտաակղի արգելեալք, եւ ակն ունէին ի վերուստ աւգնականութեան : Քանզի չարահնար աղզն Պարսից ի կասկածանս կային եւ յերկիւղի եւ (ոչ) ապին զիշխանութիւնն ի ձեռս նոցա¹⁴» :

451ին իւր պարսկամէտ քաղաքականութեամբ յայտնապէս զիրք բռնեց Վասակ Մամիկոնեաններու յունամէտ ուղղութեան հակառակ : Կը յուսար Վասակ արքայից արքային բարեկամ մնալով աւելի ամբապնդել իւր զիրքը, անգամ ձեռք բերել արքայական թագը : Եկեղեցիին եւ կրօնը շատ չէր հետաքրքրէր զինքը, ինչպէս Շահապիվանի ժողովին գործոց յառաջարանէն ալ կը տեսնուի : Կոռուի տեւողութեան իր հետապնդած երկդիմի ընթացքը դատուեցաւ Բարձրագոյն Գոնէն պետական շահերուն միատակարար եւ Վասակ ոչ միայն յուսախար եղաւ իւր ակնկալութիւններուն մէջ, այլ եւ զրիւնեցաւ թէ՛ մարզպանութեան տիտղոսէն եւ թէ՛ Սիւնեաց տանուտէրութեանն : Վերջինս յանձնուեցաւ իր երբեմնի փեսային եւ այժմեան սխերիմ թշամայն՝ Վարդապետին . իսկ մարզպանութեան կոչուեցաւ

ԱՏՐՈՐՄԻԶԳ ԱՐՇԱԿԱՆ, որ Հայաստանի բնիկ պարսիկներէն էր (452) . «Եւ զԱտրորմիդդ ոմն անուն, յաշխարհէն Հայոց՝ մարզպան հրամայէր (Յազկերտ Բ.) թողուլ, որում յանձն անէր հրովարտակով զմարդիկն Հայոց չընդոստուցանել, այլ սիրով նուաճել . եւ զպաշտօն քրիստոնէութեանն համարձակապէս ունել ամենեցուն : Եւ տեսեալ Մուշկանայ զհրովարտակն թագաւորին Յազկերտի եւ լուեալ զբանսն ի հրովարտակէն՝ կացուցանէր ի Հայս մարզպան զԱտրորմիդդ Արշական, եւ զիրս ամենայն ըստ գրե-

¹⁴ Տաշեան, Յուլիան, 653 :

ցելոցն ի հրովարտակն¹⁵ թագաւորին՝ նմա յանձն անէր»¹⁶ :

Թէ որչափ ժամանակ դործեց Ատրորմիդդ որպէս մարզպան եւ կամ որո՞նք եղան անոր յաջորդները, չէ աւանդուած : 482ին «Հայոց աշխարհիս ԱՏՐՎՇՆԱՍՊ ՅՈԶԱՄԱՆ-ԳԵՍԱՆ էր մարզպան»¹⁷ : Սա իր բնակութիւնն ունէր «ի դաշտին Շիրակայ» . քիչ ետքը կը սպանուի Ակոռիի ճակատամարտին մէջ :

482ին, երբ Վահանեանը ապստամբութեան դրօշը կը պարգէին եւ Ատրվշնասպ Ատրպատական կը փախչէր, նախարարներու ժողովը Հայոց մարզպան կը հռչակէր ինքնազուխ՝ ՍԱՀԱԿ ԱՍՊԵՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ¹⁸ . իսկ սպարապետութիւնն եւ Մամիկոնեանց տանուտէրութիւնը կը յանձնէր Վահանին . «որք նախ հաստատապէս ի վերնոյն հրամանէ եւ ապա ի Հայոց ընկալան զգործակալութիւնն» կը գրէ պատմագիրը : Սահակ մարզպան տարի մը ետքը կը նահատակուի պարսկական ոյժերու զէմ մղուած կոռուի մը մէջ :

Զատմիհր Հազարաուխտ, որ պարսկական ոյժերուն զօրագլուխն էր ի Հայս, Ատրվշնասպի սպանութենէն ետքը հրովարտակ մը կ'ընդունի Պերոզէն, «զՇԱՊՈՒ ՀՆ ի Միհրան տոհմէն անդէն յաշխարհին Հայոց Քոզդուլ զնդաւ մարզպան» : Ըստ հրամանին Հազարաուխտ «թողոյր աստէն զՇապուհ պարսիկ այրուձիով, այրընտիր զնդաւ եւ ինքն փութով զնայր ի Վիրս»¹⁹ :

Պերոզի արշաւանքը Հեփթաղներու զէմ կը ձախողի . կը տուժէ հօն իր գլուխն ալ : Գահին վրայ կը յաջորդէ իր եղբայրն Վազարը, որ զՇապուհ եւ կանչելով, փոխարէն Հայաստան կ'ուղարկէ Վշնասպ նիխարականը, վահանի հետ հաշտութեան մասին բանակցելու : Հաշտութիւնը կը կնքուի :

484ին կը նշանակէ Վազարը Հայաստանի համար նոր մարզպան ԱՆԴԵՎԱՆ անուն . իր մասին կը գրէ Ղադար . «Յայնժամ գայ յերկիրս Հայոց մարզպան, որում անուն էր Անդեկան, այր խելացի, մտազիր, իմաստասայեաց, որ զիտէր ճանաչողութեամբ որո-

¹⁵ Տագ. ի հրովարտակէն : ¹⁶ Փարպ. 73 : ¹⁷ Անդ, 118 : ¹⁸ Անդ, 121 : ¹⁹ Անդ, 146 :

շել զիմաստունն յանմտն եւ զլաւն ի վատ-
թարէն» (էջ 177):

Անդեկան կը քննէ ի մերձուստ երկրին
կացութիւնը եւ անոր տնտեսական պայման-
ները. կը ծանօթանայ Վահանի հետ եւ կը
ճանչնայ անոր բարեմասնութիւնները եւ վե-
րադառնալով արքային՝ կ'առաջարկէ իր փո-
խարէն զՎահան Հայոց մարդպան: Վաղարշ
կ'ընդունի առաջարկութիւնը. եւ «վաղվա-
ղակի հրամայէր թագաւորն Վաղարշ՝ միա-
բանութեամբ ամենայն աւազանւոյ դրանն եւ
Արեաց՝ հրովարտակ առնել ի Հայս եւ զտէրն
Մամիկոնենից եւ զգորավարն Հայոց Վահան
մարդպան ի վերայ աշխարհին Հայոց կար-
գել» (178):

ՎԱՀԱՆ Մամիկոնեան մարդպան անուա-
նուեցաւ 484ին: Վաղար Փարպեցի իրեն «տէր
Մամիկոնենից, զորավար Հայոց եւ մարդ-
պան» (2, 5, 178), նաեւ «սպարապետ Հայոց
եւ մարդպան» (6) տիտղոսները կու տայ.
ուսկից կ'իմացուի թէ Վահան միաժամանակ
թէ՛ Մամիկոնէից տէր, թէ՛ սպարապետ
Հայոց եւ թէ՛ մարդպան էր. ուրիշ խօսքով
երկրին իշխանութիւնը կենդրոնացուցած էր
իր անձին վրայ: Վաղարշի այս վստահու-
թիւնը շարաշար չգործածեց Վահան. բայց
իր իշխանութեան ընդարձակութիւնը պատ-
ճառեց երկիւղ Կաւառին, որ փորձեց, նաեւ
զէնքով, սեղմել. բայց Վահան համարձակե-
ցաւ, նոյնպէս զէնքով, պաշտպանել իւր օրի-
նաւոր ազատութիւնը:

Վահան վարեց իւր իշխանութիւնը 20
տարի²⁰ իմաստութեամբ եւ քաջութեամբ.
մահը պէտք է զնել 504ին, կամ տարի մը յե-
տոյ:

Յաջորդեց իշխանութեան մէջ կրտսեր
եղբայրը՝ ՎԱՐԴ Մամիկոնեան. կը գրէ Սե-
րիոս. «Յետ Վահանայ կալաւ զիշխանութիւն
Վարդ պատրիկ եղբայր նորա սակաւ ինչ ժա-
մանակ եւ մեռաւ» (էջ 25): Ժամանակը աւելի
կը ճշդէ Ասողիկ՝ հաշուելով «ամս Դ.» (էջ
82): Այս չորս տարիները պէտք է գետնդել
504—508 ժամանակամիջոցի մէջ: Առ այս
ունիքը հաստատուն կուան Բարգէն Կաթո-
ղիկոսի Ա. թուղթը, որ գրուած է Կաւառի
թագաւորութեան ԺԼ. տարւոյն (506). այս-
պէս կը յիշատակուի հոս ժամանակակից Մա-

²⁰ Ասողիկ (էջ 80) կը գրէ. «որ պիտանայր
ամս Լ.» որ անհնարին է. կ'առաջարկեմ ուղղել
«ամս քսան», այն է 484—504/505:

միկոնէից տէրը. «եւ ի բարեպաշտ պետաց եւ
իշխանաց Հայաստան աշխարհիս, որ բերեն
զուղղափառ հաւատ յինքեան՝ Վարդ Մամի-
կոնեան, Մահակ Կամսարական Արշարունեաց
տէր, Սպանդիատ Հայոց ասպետ» . եւ գար-
ձեալ՝ թղթին վերջը. «Ես Բարգէն Հայոց
Կաթողիկոս եւ ամենայն եպիսկոպոսունք, եւ
Վարդ Մամիկոնեան եւ այլ որ (սպ. ուր)
միանգամ իշխանք եւ նախարարք էաք, դրե-
ցաք»²¹: Սերիոսի տուած տիտղոսը «պատ-
րիկ» եւ Բարգէնի թղթին մէջ «մարդպան»
տիտղոսին անյիշատակութիւնը կասկած կը
յարուցանէ մեր մտքի մէջ Վարդի մարդպա-
նութեան մասին: Այս կասկածը զժուարաւ
կրնայ փարատել Բարգէնի Բ. թուղթը, թէեւ
բացայայտ ըսուած է հոն. «եւ յիշխանաց՝ ի
Վարդայ Մամիկոնից տեսանէ եւ ի Հայոց
մարդպանէ»²²: Կաւառի, արքայից արքայի
կրիւր Վահանի հետ իւր յաղթութիւնը տա-
րաւ անոր մահունէն ետքը: Հաւանօրէն Կա-
ւատ չանուանեց զՎարդ մարդպան. բայց
չնչանակեց նաեւ պարսիկ մարդպան. եթէ
հարազատ է «պատրիկ» տիտղոսը, այս կա-
րող էր միայն Կայսեր շնորհքն ըլլալ:

Վարդի մահէն ետքը Հայաստանի մարդ-
պանութիւնը միւսանգամ Պարսիկներու յանձ-
նուեցաւ. «զկնի նորա (այսինքն Վարդայ),
կը գրէ Սերիոս (26), եկին մարդպանք պար-
սիկք. ապա ոչ կարացին պատերազմել Հայք.
ի հնազանդութեան կացին մինչեւ ցՍուրբն
մարդպանն (572) եւ ցՎարդան Մամիկոնէից
տէրն»: Ասողիկ, որ ծանօթ է Սերիոսի այս
տողերուն, կ'աւելցնէ թէ «եւ ապա զկնի
Վարդ պատրիկայ... մարդպանք պարսիկք
տիրեցին Հայոց ամս ԺԱ. ... եւ ապա եկաց
իշխան Հայոց Մեծեթ Գնունի ամս Լ.: ...
ի Դ. ամի հայրապետութեան իւրոյ (Ներսէս
Աշտարակեցի, 548—557) եւ ի Ժ. ամի իշ-
խանութեան Մեծեթայ արար ժողով ի քա-
ղաքն Դուին»²³:

Ասողիկն այս տողերու մէջ յայտնապէս
ժամանակագրական շիթութիւն մը կայ

²¹ Գիրք թղթոց, էջ 42 եւ 47:
²² Գիրք թղթոց, էջ 48: Բարգէնի այս Բ.
թուղթը, ինչպէս այլուր ցոյց տուած եմ, թարգմա-
նուած է իւր 606ին յեղեւսիս, յունարէն օրինակ մը,
հայերէն սկզբնաղբին 572ին այրած ըլլալուն պատճա-
ռաւ: Այս նոր թարգմանութիւնը յիսոյ յղկուած է,
կըր ընդհարմ մանր պլյալութիւն կրած է. հմմտ.
Հանդ. Ամս. 1932, էջ 270—271:
²³ Ասողիկ, 82. հմմտ. եւ Սամ. Անեցի, 74.
Կիր. 23:

որուն ապա հետեւած են կոյրկուրայն Սամ.
Անեցի եւ Կիր. Գանձակեցի: Յիշուած ժո-
ղովը ինչպէս կ'երեւայ Դունոյ 554/555ին գու-
մարուած ժողովը է: Բայց անիմանալի է, թէ
ինչպէս այս ժողովին կից կարող է յիշատա-
կուիլ Մեծ Գնունի, որ առաջին անգամ
630—640 տարիներուն երեւան կու գայ պատ-
մութեան մէջ²⁴:

506 աշնան կը քաճ էր Կաւատ Անաստաս
Կայսեր հետ խաղաղութեան դաշինք. այժմ
զգալով իւր ոյժը բաւական զսպելու եւ կար-
ձելու Հայոց ընդլիմադրութիւնը, Վարդի
մահունէնէն ետքը ուղարկեց պարսիկ մարդ-
պան:

Դժբախտարար անձանօթ կը մնան մեզի
առաջին պարսիկ մարդպաններու անունները.
548—554 տարիներու համար ունինք ընտիր
աղբիւր մը Մախոթ—Յիզախրուղիս վկային
նահատակութեան պատմութեան մէջ²⁵:

Մախոթ երբ Դուին կը հասնի (548)
«Հայոց իշխանն» էր ՆԻՀՈՐԱԿԱՆ²⁶: Ճիշդ
այս թուին զինքը կը յիշէ նաեւ Ներսէս Աշ-
տարակեցի, երբ կը գրէ 554 Մարտ 29ին
տարակեցի, երբ կը գրէ 554 Մարտ 29ին
Դունոյ ժողովոյն գործերու մէջ թէ «ի ԺԵ.
Դունոյ ժողովոյն արքայից արքայի (548), ի
մարդպանութեան Նիհորականայ, արարին
(Սուժիկ Նեստորականք ի Դուին) իմն շի-
նած յանուն Մանածրհի Ռաժկի»²⁷: Առ Նի-
հորական հրովարտակի մը սկիզբը յառաջ կը
բերէ Տարարի²⁸, որ այսպէս կը սկսի. «Յար-
քայնն Սոսրովայ որդւոյ Կաւատայ առ Չա-
տոյէ Նիխորական պատգոսապան Ատրպատա-
կանի, Հայաստանի եւ սահմանայն նորա»:
Ասիկա ապա Լազիստան ուղարկուեցաւ
(553ին) եւ իր կրած պարտութեան մը համար
Սոսրովի հրամանով մորթաղերձ սպանուե-
ցաւ²⁹:

Նիհորականի մարդպանութեան երեք տա-

²⁴ Հմմտ. Սերիոս, 101, 103:
²⁵ Վարք եւ վկայարանութիւն Սրբոց, էջ 126:
²⁶ Անունս Նիխորական, գրուած նաեւ Նիհորա-
կան, պահ. Nachwergān, յունական աղբիւրներու
մէջ կը ներկայանայ զՆաջօրյան, Ազաթիս, Գ. 2.
զՆաջօրյան, Մենանդր 11. արար եւ պարսիկ հեղի-
ճ Նաջօրյան an Nachiragān, an Nachāragān (Nöl-
deke, Tabari, 152, ծ. 2). Նէօլդեկէ կը համարի թէ
դասակէ կ'երեւայ: «Իշխան», «մարդպան» եւ «պատ-
մասապան» նոյնիմաստ տիտղոսներ են. տե՛ս վերը
§ 25, ծան. 30:
²⁷ Գիրք թղթոց, էջ 72:
²⁸ Nöldeke, Tabari, էջ 152—153:
²⁹ Ազաթիս Գ. 2, Գ. 23: Մենանդր, էջ 368:

րիները պէտք է տեղաւորել 547—549 տարի-
ներու մէջ:

ՆԱՍՍՊԵՏ. Վկայագրին համաձայն «յետ
սակաւ ժամանակի փոխանորդէ զկնի Նիխո-
րականին Նախապետն անուանեալ» (126):
Նախապետ, զոր Պրոկոպիոս Ναβέδης կը
կոչէ, 542ին Մծրինի առջեւ Բելիսարէն պար-
տութիւն կրած էր: 543ին, երբ Սոսրով իւր
որդւոյն ապստամբութեան եւ գորքին ի Բա-
քու ժանտախտէ կոտորուելուն պատճառաւ
նեղ ինկած էր, «Նախապետ Պարսկական
Հայաստանի զօրավարը»³⁰ հրաման կ'ընդու-
նէր թագաւորէն «Դունի քրիստոնէից եպիս-
կոպոսապետը»³¹ Հոովմէական Հայաստանի
ստրատելախին ուղարկել խաղաղութիւն խըն-
դրելու համար: Կաթողիկոսը՝ Քրիստափոր
Ա. Տիրաոխիցի, «փիլիսոփայն»³², իւր եղ-
բոր³³ հետ կը հասնի Վաղերիանոսի ներ-
կայացնելու Սոսրովի խնդիրը: Բայց Վաղե-
րիան լսելով պատգամաւորներէն թէ արքայից
արքայն դժուարին կացութեան մէջ է, կայ-
սեր հրամանաւ կը շարժէ բանակը դէպի
Դուին: Ներսէս էր Հոովմէական բանակին
զօրավարը. Անդր զիւղին մէջ կը պատահին
Նախապետին, որ 4000 զօրքով դարանամուտ
էր եղած: Սոսրուրդի մէջ կ'իյնայ Ներսէս.
եւ գորքը անառաջնորդ կը դիմէ վայրագ փա-
խուստի³⁴:

Այս թուին Նախապետ իրբեւ մարդպա-
ն կը գտնուէր Հայաստան: Հաւանական կ'ե-
րեւայ: Երկրորդ անգամ նոյն պաշտօնի կո-
չուած է Նիխորականէն ետքը, ուստի 549—
551 տարիներուն: 551/52ին կը հանդիպինք
իրեն ի Լազիստան³⁵: Պրոկոպի³⁶ համաձայն
Նախապետ «յետ Սոսրովու փառօք եւ այլով
պատուով առաջինն ի Պարսիկս լեալ իցէ»:
Պրոկոպ Նախապետ անուան ստուգաբանու-
թենէն այս մտքի եկած է: Պէտք է ըսել որ

³⁰ Պրոկոպ. Պարսի. Պատ. Բ. 24. Ναβέδης τῆν-
καθ'α ἐν Περασηνείοις τὴν στρατηγίδα ἔχων ἀρχι-
³¹ Պրոկոպ. անդ. τὸν ἐν Δούβιοις τὸν χειριστῶν
ἐξορία, առանց անուան. Չամէան, Պատմ. Հայոց,
Բ. 246. սխալ ժամանակագրութեան մը հետեւելով
նոյնպէս ցած է Յովհաննէս Գարեղինեցու հետ. բայց
հոս ուղիղ ժամանակագրութեամբ Քրիստափոր Ա. Տի-
րաոխիցի (538—545) միայն կրնայ ըլլալ:
³² Ասողիկ, էջ 81:
³³ Չամէան, անդ, Կաթողիկոսին եղբայրը կ'ա-
նունէր Գէորգ, յայտնի է ի՞նչ աղբիւրէ:
³⁴ Պրոկոպ. անդ, 24—25: Հմմտ. Spiegel, III,
436:
³⁵ Պրոկոպ. անդ, Բ. 18:
³⁶ Պրոկոպիոս, Գոթ. Պատ., Գ. 9:

